Հայաստանի դիվանագիտական դպրոցը հիմնադրվել է 2010 թվականին դիվանագիտական կադրերի պատրաստման, դիվանագետների, ինչպես նաև կառավարական գերատեսչությունների արտաքին հարաբերությունների ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստման նպատակով: Դպրոցը նախորդ տարիներին հաջողությամբ կատարել է այդ դերը՝ արտաքին գործերի նախարարության և միջազգային դոնորների, ներառյալ Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի ուղղակի աջակցությամբ:

ԵՄ կողմից ֆինանսավորվող նոր ծրագիրը, որ կաջակցի Հայաստանի դիվանագիտական դպրոցի վարչական և ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը, մեկնարկել է 2013 թվականի մայիսին: Այս ծրագիրը գործնական աջակցություն է տրամադրում Հայաստանի դիվանագիտական դպրոցի գործունեությանը և խորհրդատվություն՝ հաստատության ապագայի ռազմավարության մշակման հարցում: Ծրագիրը կազմում է ԵՄ և Հայաստանի կառավարության միջև համաձայնեցված, հանրային կառավարման համար նախատեսված «Վարչական և ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման» ընդգրկուն ծրագրի մաս:

Դասախոսների, խորհրդատուների և համակարգողների թիմը ԵՄ անդամ և այլ երկրիներից Հայաստան ժամանել են աջակցելու դիվանագիտական դպրոցի անձնակազմին՝ հայ ապագա դիվանագետների համար դպրոցի «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» ծրագրի շրջանակներում տեսական և գործնական տարբեր հմտությունների դասընթացների ներկայացմամբ: Այս ծրագիրն ավարտող ունկնդիրները դիվանագետ դառնալու համար կարող են դիմել Արտաքին գործերի նախարարություն: Յուրաքանչյուր տարի դիվանագիտական դպրոցի 27 տեղերի համար մեծ մրցակցություն է ընթանում: Հինգ տարվա ընթացքում հայկական դիվանագիտության շարքերը համալրվել է դպրոցի ավելի քան 75 շրջանավարտներով:

Ծրագրի մի մասն աջակցություն է տրամադրում դպրոցին՝ Երևանում տեղակայված միջին օղակի դիվանագետների համար նախապատրաստվող վերապատրաստման ծրագրի մշակման հարցում: Միջազգային փորձագետները խմբեր են կազմում դիվանագիտության և միջազգային հարաբերությունների ոլորտներում հայ բարձրորակ մասնագետների մասնակցությամբ: Նրանք մշակում են հակիրճ մոդուլներ՝ առաջարկելով կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման ծրագրեր և քաղաքականության համապատասխան ոլորտներում հատուկ գիտելիքներ:

Ծրագիրը ներառում է տեղեկատվական և արտադասընթացային մի շարք լրացուցիչ միջոցառումներ, օրինակ՝ ուսումնական այց Բրյուսելում և Վիեննայում տեղակված եվրապական և միջազգային հաստատություններ, ինչպես նաև միջազգային կազմակերպություններում երիտասարդ դիվանագետների ուսումնական պրակտիկա:

Դպրոցի առաջիկա ռազմավարության ուրվագծմանն աջակցելու նպատակով ապագայում խորհրդատուների խումբը սերտորեն կաշխատի տնօրեն, դեսպան Վահե Գաբրիելյանի հետ՝ վերլուծելու այլ երկրների համապատասխան լավագույն փորձը: Նմանատիպ դիվանագիտական հաստատությունների հետ շարունակվող շփումները ավելի ինտենսիվ կդառնան, և կուսումնասիրվեն հետագա համագործակցության հնարավորությունները:

Ծրագիրը մեկնարկել է 2013թ. մայիսին, 2015թ. ապրիլին այն երկարաձգվել է ևս երկու տարով և ստացել է լրացուցիչ ֆինանսավորում: Ծրագիրը շարունակելու է դիվանագիտական դպրոցին աջակցություն ցուցաբերել մինչև 2017թ. ապրիլ ամիսը: Ծրագրի ընդգանուր արժեքը կազմելու է 1,660,000 եվրո: